Կյանքը խրամատից հետո

Նպատակ:

Վիրավոր և հաշմանդամ վետերաններին հնարավորություն տալ վերափոխվել և վերակառուցել իրենց կյանքը՝ կայուն բիզնես ձեռնարկությունների ստեղծման և զարգացման միջոցով:

Գործողություններ:

Բիզնեսի զարգացման դրամաշնորհներ տրամադրել հաշմանդամություն ունեցող վետերան ձեռներեցներին:

Ծրագրի նկարագրություն:

Մինչ 2020-ի 44-օրյա պատերազմը Հայաստանում ապրում էր ավելի քան 9000 հաշմանդամ վետերան, որոնց թիվը կտրուկ աճեց հենց պատերազմի հետևանքով:

Նոր կյանք վերսկսելու և համայնքի մեջ վերաինտեգրվելու ճանապարհին այդ զինծառայողները բախվում են բազմաթիվ խոչընդոտների, ներառյալ՝ որոշ դեպքերում մասնագիտական հմտությունների բացակայությունը, կայուն եկամուտ ստանալու դժվարությունը և անմատչելի ենթակառուցվածքներն ու միջավայրը:

Հենց այս հիմնախնդրին լուծում տալու նպատակով Երևանում հիմնադրվել է **«Աջակցություն վիրավոր զինվորներին»** ՀԿ-ն: 2018 թվականից ի վեր ՀԿ-ն և վերջիիս «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոն»-ը ոտքի է կանգնեցրել ավելի քան 3000 վիրավոր զինծառայողի՝ թերապիաների, խորհրդատվության, մասնագիտական ծրագրերի ուսուցման և զբաղվածության օժանդակության միջոցով:

Այժմ **«Ազնավուր» հիմնադրամի** հիմնադրամի հետ մեկնարկած նոր ծրագրով նրանք ցանկանում են էլ ավելի նպաստել նրանց սոցիալական և տնտեսական ինտեգրմանը:

Ինչպես 2020 թ.-ի Արցախյան պատերազմում, այնպես էլ մինչ այդ վիրավորում ձեռք բերած զինծառայողներին խրախուսվում է ներկայացնել իրենց ձեռնարկատիրական գաղափարները ՝մինչև 5000 եվրո (~ 6000 ԱՄՆ դոլար) դրամաշնորհ ստանալու հնարավորությամբ: Բացի ֆինանսական աջակցությունից, ընտրված մասնակիցները նաև կանցնեն վերապատրաստում, ինչպես նաև հնարավորություն կունենան օգտվել մենթորական և մասնագիտական խորհրդատվությունից ՝ իրենց գաղափարները հաջողակ և կայուն բիզնեսի վերածելու համար:

1988-ի ավերիչ երկրաշարժից հետո լեգենդար երաժիշտ և մարդասեր Շառլ Ազնավուրը բազմաթիվ նախաձեռնություններ սկսեց՝առավելագույն կարիքի մեջ գտնվողներին օգնելու համար: Ավելի ուշ Ազնավուրը և նրա որդին ՝ Նիկոլասը, ստեղծեցին «Ազնավուր» հիմնադրամը ՝ կրթության, մշակույթի և սոցիալական բարեկեցության ոլորտներում զարգացմանն ուղղված գործունեությունը շարունակելու նպատակով:

Պատերազմի ընթացքում հիմնադրամը 175 տոննա մարդասիրական և բժշկական օգնություն է մատակարարել: Այժմ նրանք ավելի քան 10,000 դոլար են հատկացրել վետերանների ձեռնարկատիրական գաղափարները խթանելու համար: «Այո»-ն ուրախ է համագործակցել նրանց հետ ՝դրամաշնորհների ֆինանսավորման ֆոնդը ընդլայնելու համար:

Մեր զինծառայողները զոհաբերեցին ամենաթանկը մեզ համար, ժամանակն է, որ մենք ներդրումներ կատարենք նրանց կյանքը բարելավելու համար:

Միացի՛ր այսօր:

Բյուդջե

15 465 000 Դ

Փոխարժեք
1 ԱՄՆ դոլար = 515.5 ՀՀ դրամ